


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
զրուած իւրեւեպէ ուղղիւ առ  
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի  
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐԷՐԻ	
Տարեկան	30
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խոնքազոտքեան վրայ է :

Խոնքազոտքեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ  
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)



Son Excellence Boghos Pasha Nubar

Ն. ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՊՈՂՈՍ ՓԱՔԱ ՆՈՒՊԱՐ

Եթէ Հայ ազգը քանի մը դարերէ ի վեր օտարներու անտանելի լուծին տակ կը հեծէ, եթէ մէկ կողմանէ բռնութիւններ ի գործ դնելու վարժուած իշխանութիւնը Հայ ազգին ու Հայաստանին գոյութիւնը ուրանալ կ'ուզէ և զայն ուրիշ զարգացեալ ազգերու շարքին մէջ չ'հաշուելու չափ անպիտանութիւն կը գործէ, միւս կողմանէ Հայ ազգին մէջ ծնած և անոր փառքն ու պարծանքը ըլլալու սահմանուած նշանաւոր անձնաւորութիւններ կան, որ այդպիսիներն ամօթահար կ'ընեն և կ'ստիպեն զանոնք խոստովանել թէ՛ Հայ ազգը դարաւոր փառաց արժանացած, ամենափայլուն օրերու մէջ ապրած, իր ծոցէն թագաւորներ և իշխաններ ծնած է, և հետեւաբար՝ արժանի է ամեն յարգանքի ու մեծարանաց :

Տասնեկիններորդ դարու վերջին քառորդին մէջ մանաւանդ մեր ազգի դժբաղդութիւնէն, վերոյիշեալ փորձերը մեծ թափով կրկնուեցան և քաղաքակիրթ աշխարհն ալ վայրկեան մը տրամագրութիւն ցոյց տուաւ ընդունիլ այդ թիւր գազափոփոխներն, հակառակ իր վիշին ծանրացած մարդասիրական և նուիրական պարտականութեան, և ստէպ

չեղեցաւ զուղիչ արահետէն, ուրկէ ընթանալ պէտք էր :

Ըսինք որ Հայ ազգը ուրիշ բոլոր ազգաց նման յարգանք ու մեծարանք վայելելու իրաւունք ունի և եթէ մեր այդ իրաւասութիւնը պաշտպանելու համար զօրաւոր փաստեր պակսին մեզ, բաւական պիտի ըլլայ յիշատակել այն հոշակաւոր անուններն որ հայկազանց իշխանութեան անկուսէն ի վեր երեցած են Հայ ազգի հորիւզոնին վրայ և իբրև լուսաւոր աստղ փայլած են իրենց բարձր հանճարով և անբաղդատելի տաղանդով : այնպէս որ քաղաքակիրթ ազգերը իսկ հիացմամբ համակուած են :

Այսպիսեաց կարգին մէջ՝ կրնանք ըսել, առաջին տեղը գրաւած էր մեծանուն դիւանագէտը, Նուպար բաշա Նուպարեան, որ ամբողջ եւրոպան իր անուան ու տաղանդին ծանօթանալով, ճանչցաւ միանգամայն թէ՛

Հայ լքեալ ու հալածեալ ազգ մը կայ, որ իր ծոցին մէջ Նուպարներ կը սնուցանէ :

Իրաւ է թէ գտնուեցան կարճատես մարդիկ ալ — դժբաղդաբար մերկններէն — որ ուրանալ ուղեցին մեծ դիւանագէտին արժանիքը և նոյն իսկ ստուերի տակ թողուլ ջանացին անոր իրական օգտակարութիւնները դէպի իր ազգը, սակայն՝ մենք պիտի կրնանք յայտարարել թէ՛ սա առ թուած էր Նուպար բաշայի մէկ սխալէն : այն է՝ իր բարեգործելու ատենը, իր առջեւ փողահարներ չ'ըրկելը :

Չենք կարծեր որ գտնուի մէկը որ մեղադրել ուզէ Նուպար Փաշան, ցուցամուտութեան զգուշացած ըլլալուն համար իբր պարկեշտ և բարեկիրթ մէկը : և եթէ Նուպար Փաշա իր գիրքին պահանջմանց հետեւելով, երբեմն զգուշաւոր ընթացք մը թերևս լրանած է իրեններուն նկատմամբ, սակայն կրնանք ուրանալ թէ Հայ ազգին համար Նուպար Փաշայի նման հանճարի մը գոյութիւնը ամենամեծ պարծանք մը ըլլալէ զատ սա օգուտներն ալ ունեցաւ որ՝ քաղաքակիրթ աշխարհը հասկցաւ թէ միայն իրենց մէջ չ'է որ կը ծնին Պիղմարքներ ու Կլատու

թաններ ևն : այլ կայ անդին ազգ մը՝ թէև մերկացած իր դարաւոր փառքերէն ու հարստութիւններէն, բայց իր մէջ ունի իրենցինն հաւասար հանճարներ ու հնարիչներ :


Այսպէս ն. Վսեմութիւն Պօղոս Փաշա Նուպար, որոյ այսօր կենդանագիրը ունինք մեր աչքին առջև, իր բարձր իմացականութեամբ և հանճարեղ մտքով արժանի յաջորդ մը կը լինի իր հօր և հիացման կ'առաջնորդէ իր վրայ մտածող մտքերը, Նուպարեան տան համբաւը միշտ միեւնոյն բարձրութեան վրայ պահելով, ի փառս Հայ ազգին :

Մեծանուն դիւանագէտ Նուպար Փաշայի արժանի զաւակը, Վսեմ Պօղոս Փաշա, եթէ իր հօր նման մեծ դիւանագէտներու շարքին մէջ համբուած չ'է, սակայն իրաւամբ կրնանք դասել զայն մեծ հնարիչներու կարգին մէջ : ասոր հաստատուն ապացոյցներէն մին է իր ինքնաշարժ սրօրը, որուն փորձը ամենամեծ յաջողութեամբ պըսակուեցաւ, անցեալ փետրուար ամսուն իր Շուպրայի կալուածներուն մէջ և տեղական բոլոր թերթերը հիացումով խօսեցան անոր մասին : և արդէն 1900 ի միջազգային ցուցահանդէսին մէջ ալ Ֆրանսական կառավարութիւնը դնահատելով մեծ հնարիչին գիւտը, Պատույ Լէգէոնի աստիճանաւ վարձատրած էր զայն : պատիւ մը՝ որ ամբողջ Հայութեան ալ կրնայ վերաբերիլ :


1851 ին ծնած է արդի մեծ հնարիչը և նախնական խնամեալ դաստիարակութիւն մը ստանալէ վերջ, Փարիզի Էգոյ Սանդրալը յաճախած է, ուր իր երկրաչափական ուսման ընթացքը աւարտելով, առաջին երկրաչափի վկայականաւ մեկնած է անտի, ու այնուհետև՝ գիտենք թէ որչափ իր միտքը յոգնեցուցած է ընդհանուր մարդկութեան օգտակար ընծայելու համար իւր ստացած ուսումը՝ և ահա այսօր, իրեն չնորհիւ կ'ունենանք երկրագործական գործիք մը ա՛յնչափ կատարելագործեալ : Իցիւ թէ մօտ օրերու մէջ կարենայինք այդ գործիքով հերկել Հայաստանի բերրի հողերը, միայն հազարապատիկ և բիւրապատիկ ստանալու համար :

Սակայն եթէ Նորին Վսեմութեան հանճարէն բղիւսած գիւտը այս պահուս Հայաստանի արտերուն մէջ փոխադրել կարելի չէ, դա պատճառ մը չէ ըսելու համար թէ եգիպտոսի երկրագործութիւնը չ'պիտի օգտուի անկէ :

Եգիպտական հանդէս մը, Նուպարեան



ՊԱՏԿԵՐ 1 .



ՊԱՏԿԵՐ 2 .

գերդաստանին վրայ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ մեզ :

« Նուպրեան գերդաստանին պատմութիւնը, կ'ըսէ, սեղմօրէն կապուած է եգիպտոսի պատմութեան հետ . և երբ զայն թղթատելով նեղոսի ամերը բարեբեր և ծաղկած տեսնուի, պատճառը այն է որ այդ նշանաւոր ընտանիքին յէկ անդամը հոտկէ անցած է » :

(Շարունակելի) Ե .

ԿԵՆՍԱՏՈՒ ԱՐՈՐԸ

Օրը ուրբաթ էր, ամիս փետրուար, Շուպրա արտի մը մէջը կը կենար Մի շոգիւշարթ վիթխարի արօր, Հին արօրին քով հսկայ մի հօր . Հոն էին գիզուած մեծամեծ մարդեր, Եւ շատ ժողովուրդ կային անհամբեր Արդիւնքը տեսնել այն նոր արօրին, Որ կեանք պիտի տար մեր բոլոր երկրին : Հոն էր եւ Վսեմ . Պօղոս Նուպրեան, Որ ճակատին վրայ հանճարք կը շողան . Ամենքն յարգեցին այն մեծ հեղինակ, Որ կ'ուզար մարդկան ներշնչել նոր կեանք . Հացը՝ որ ամեն պէտքերէն է վեր, մարդկային ազգին զայն կը պատրաստէր . Աստուած՝ Հանճար՝ Հաց տարերքն են կեանքին՝ Որք արեւու պէս ընդ միշտ կը փայլին :

Արօրը շարժեց կենսաբեր շոգին, Սկսաւ երթալ նման մի քաջին, Եւ այն Շուպրայի ընդարձակ հողեր, Արագ շարժումով ցիւր ու ցան կ'ընէր . Հայնկեկ ու խորունկ ահօս կը բանար, Դիւրաշարժ քայլով կերթար ու կուգար . Հողը կը գողար ներքեւ արօրին, Ձի շատ օրուան գործ ըրաւ քիչ ժամին . Երկիրը խնդաց, մարդիկ հրճուեցան, Նոյն ժամ արթնցաւ աշխարհն Հայաստան . Ձ ՊՕՂՈՍՍ օրհնեց մայրական խանդով, Եւ յայտարարեց գոհունակ սրտով, Թէ « Երկրագործի հեղինակ նախկին, « Հայ մի էր Յարեթ՝ որդեակը Նոյին, « Հիմայ ալ այս մեծ բարձր հեղինակ, « Դարձեալ Հայ մի է մեծ տոհմի զաւակ . « Անա թէ ինչո՞ւ կ'օրհնեմ խնդաձայն, « Ձի աշխարհ ասոնց է միշտ պարտական, « Ապրի թող Պօղոս հանդերձ իւրայնով, « Ասողջ՝ երջանիկ՝ երկայն օրերով » :

Ս . Ֆ .

Ն . Ա . Բ . ԻՇԽԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Մարտէլի L' Aigle շարժաթիթիւն մէջ Ն . Ա . Բ . Իշխան Գուիտոն Լուսինեանի կենդանագիրը կը տեսնենք, սրուն ներքեւ թերթին Տնօրէն-Թարգմար Պ . Ֆէլիքս Նիէլի կողմէ հետեւեալ չափերէն ծանօթութիւններն տրուած են :

Շատ հին է ծագումը Լուսինեաններու մեծահամբաւ տան, որոյ ժառանգորդին, որ միանգամայն Երուսաղէմի Իշխան և Թագաւոր է, պատկերը կը հրատարակենք :

Անոր նախահայրերը Ֆրանսայի մէջ շատ մը կապեր ունեցած են, ինչպէս ժամանակուան գիււանաթղթերու ծննդակարգերը կ'ապացուցանեն :

Գլխաւոր ճիւղը Տուրոնը մեռ (անդրծովեայ) կոչուածը՝ Հիւկ Ը . րդ անուանեալ Լըսինեան էն սերած էր . որուն տղան Կի-տը-Լուսինեան, Կոմս Եաֆայի և Աքալունի 1186 ին ամուսնացաւ Երուսաղէմի Թագաւոր Ամօրի աղջկան Սիպիլի հետ և անոր տիտղոս ստացաւ :

1187 Տիբէրիտի պատերազմին մէջ, Սալահատինէն յաղթուեցաւ և Սուլթանը անոր ազատութիւնը շնորհեց, պայմանաւ որ թագաւորութիւնը լքէ . և նա Ռիշար առեւծասլախի թողուց . սա՛ ի փոխարէն Կիպրոս կղզին տուաւ անոր, որն որ իր եղբայրը տանուէրութեան ( seigneurie ) փոխեց ուր հետզհետէ իշխեցին իր յաջորդները . Բիէյ, Հիւկ, Հանրի, Ժան և Ժագ տը Լուսինեան, Կիպրոսի թագաւոր անուամբ :

Վերջին թագաւորը Ժագ Գ . րդ եղաւ, որուն խնամակալուէն Գաթիբիա Քորնարօ 1475 ին Վենետիկցիներէն օրտաքուեցաւ, և մնացեալներն հետզհետէ 100 տարի վերջը վաճառուեցան թուրքերէն :

Լուսինեան Յ . րդ ճիւղ մը, Մանչի և Անկումուայի մէջ տիրած է . Հիւկ 13 . րդի իշխանութեան օրով, որ Լուսինեան տէր յորջորջուած է և ամուսնացած Պուրկօնի Գուքին աղջկան և ապա Պէթրիս տը Նալարի հետ որ 1303 ին անգաւակ մեռած է : Իր եղբայրը Կի ժառանգած է անոր հարստութիւնը և 1307 ին նմանապէս անգաւակ մեռած է, որով իր ստացուածքները Ֆրանսայի թագաւոր Ֆիլիք Ը Պէլ զաւանգած է :

Տը Լաուօֆուգօները, տ' Էօններն, տը Տիսիները, տը Սէն Վալէրիէները, տ' Անկիւլէֆները, տը Շաթոտուները, Սիւր Լուսինեաններէն սերած են :

Երուսաղէմի ու Կիպրոսի հետ թագաւորաց բուն ժառանգը ուրեմն, կը տեսնուի որ շատ մօտէն կապուած է Ֆրանսայի շատ մը յարգելի և ծանօթ ազնուական գերդաստաններու :

Նա ատկէջ զատ մեր երկրին համար ամենամեծ համակրութիւն և անճնուիրութիւն մը

կը տածէ և երբէք մեր երկրին համար իր գաղափարէն չեղած չէ, և այս է պատճառը որ իրեն մօտենալու առիթը ներկայացած ատեն յարգանք և համակրութիւն կը ներշնչէ :

Մենք ալ կը հաստատենք բոլոր այն սողերը՝ որ Ն . Ա . Բ . նուիրուած են մեր սիրելի պաշտօնակից Լէօօլ Լուիի կողմէ, ժուրնայ Տի Պօրսօի Յունուար 17 թիւին մէջ . առգեր՝ որ մեծ հաճոյքով կ'արատագրենք և հարկաւ մեր ընթերցողները զանոնք ըստ արժանւոյն պիտի պնտահատեն :

Ըսենք նոյնպէս որ իշխանը շատ զարգացած միտք մըն է, և անմահ քաղաքավարութեան ու հազուագիւտ բարեգործութեան սիրտ մը կը կրէ :

Ասկէջ զատ ճշմարիտ բանասէր մը . գրագէտ մըն է . վերջերս Փարիզի Մօրբիս գրատունը՝ անոր Nouveau Dictionnaire Illustré Français-Arménien ի առաջին հատորը հրատարակեց որ 1060 էջերէ կը բաղկանայ :

Այս գործը լեզուաբան մը, բանասէրի մը և համայնագէտի մը աշխատութիւնն է, և աւանանմեծ գնահատութեան արժանի է : Այս ժամանակներս այնչափ կը խօսուի Հայաստանի և հայասիրութեան մասին, և մենք Ֆրանսացիքս կը հիանանք այդ պատկառելի ծերունիին վրայ, որ առանց ինքզինքը Փարիզեան հրապոյրներու գիրկը նետելով գինովաւաւ, կէս դարէ ի վեր այնչափ յարատուութեամբ կ'աշխատի ժողովրդի մը մտաւորական և բարոյական վերածնութեան . ազգի մը՝ որն որ այնչափ տուտապած է բնականներու հարստահարութենէն և ճնշումներէն :

Ֆէլիքս Նիէլ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄԸ ՈՒ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Աղգ . Հիանդանոցի մասին՝ այս էջերուն մէջ ըրած առաջարկիս առթիւ, հետեւեալ շատ յատկանշական նամակը ստացայ բարեկամէ մը, որ, թէև մտերմակօնօրէն գրուած, բայց խիստ շահեկան ըլլալուն չէի կրնար ինծի միայն պահել :

Չափազիկ 17 Մարտ 1901

Ազնիւ Պարոն Տիգրան Հաճնլեան :

Սերելի բարեկամ,

Պօլսոյ Աղգ . Հիւանդանոցի հոգաբարձութեան ծանօթ պաշտօնագիրը, իր հրատապ այժմէականութեամբ, ձեռք գրած է մի առաջարկ ներկայացնել Եգիպտոսի հայութեան «Արշալոսի» 159 թուոյն միջոցաւ : Անշուշտ ձեր այդ առաջարկութեամբ փափաքած էք անմեջական օգնութեան ձեռք կարկառել Հիւանդանոցի պաշ-

ստանական մարմնոյն, եւ այդու չը թողուլ որ « մարին » ինչպէս կ'ըսէք այն պզտիկները որոնք ենթարկուած են անողոք հիւանդութեան մը սպառնալիքին ու կեանք աջլ անոնց : Սըրտանց կը փարիմ ձեր զգացումներուն եւ պիտի մտղթէի որ ձեր առաջարկը անմիջապէս իրագործուէր, եթէ սակայն յետագայ խորհրդածուած թիւններս զիս կը համոզէին թէ մտղթանքս զուս մտղթանք պիտի մնայ ու այդ պատճառաւ ալ կը փորձուէի զայն պահել ուրիշ այլապէս կարելու որ նպատակի մը յաջողութեան, որուն այժմէակուտութիւնը սակայն « Արեւելք »-ը չէ որ պիտի բերէ մեզի :

Հրապարակուելու չը պատասխանեցի ձեր այդ առաջ արկին : Վսիկնալով որ մի գուցէ ուելլորդ լրագրական միջոցառութեան մը տեղի տայի, մասնաւոր որ մտէն ճանչնալով ձեր անկեղծութեն օգտակար ըլլալու տեսլը, փափաքելի չ'էր ինծի դրչի մէկ հարուածով կատակծիլ անոր յաջողութեանը վրայ : Սակայն չեմ վարանիր այս սողերը գրելու, վստահ ըլլալով որ զանոնք պիտի ընդունիք, բարեկամի մը պզտիկ փորձառութիւններու իբր արդիւնք եւ գտնէք հոն աշխատութեան նոր սպարէզ մը, որուն պէտքը թէեւ ամեն մարդ կ'զգայ սակայն եւ այնպէս խորունկ մտազուտի մը տակ թաղուած է դժբաղդարար :

Հարկ է ըսել թէ, ձեր յօդուած-առաջարկը գրուած ըլլալով մարտ 7ին, անապարած է կանխագուշակելու Գարակէօզեանին պատասխանը, որը ձեր զժողովութեանէն (կատակ կ'ընեմ) եւ հակառակ իր անուանին արուած ենթադրութիւններուն, անօրինակ հապճեպով մը, այսինքն երկու օրուան մէջ Գարակէօզեան ծողովոյ տրուած մագրութեան տակ դրած է, հաստատուող կտակին տարեկան տոկոսը, 800 օսմանեան ոսկի : Կետեւաբար վերցած է այլ եւս հոգաբարձութեան մեծագոյն մասաանջութեան առարկան : Հիմայ ուրեմն, պաշտօնական բանակցութիւնները մնացած են, որոնց արդիւնքը պիտի ըլլայ, անմիջապէս օգնութիւն հիւանդանոցին, որպէս զի կարելի ըլլայ որբանոցը փոխադրել այլուր եւ այլն : Այս վերջապահութիւնը ինծի համար անսարկուծելի է, վստահ Գարակէօզեանի կան ժողով մը, ինչ տարբերէ բաղկացած ըլլայ, չի կրնար առանց բացառիկ պարագայի մը, մերժէ գործածել Գարակէօզեանին 800 ոսկին եւ կամ եթէ մերժե իսկ, ձեռքերը ծալած նըստիլ, սպասելով որ եգիպտահայերը իրեն օգնութեան փութան :

Անշուշտ այս գրածներս յայտնի ճշմարտութիւններ են պիտի ըսէք, մանաւանդ որ վերջի թղթաբերով եկած թերթերը աւելի բացայայտ կը խօսին այս մասին, միայն կուզէի մի քանի տող գրել ձեր առաջարկին էութեանը վրայ :

Պահ մը ենթադրելով որ Պօլիս բան մը պիտի փորձէ ընել որբ-որբուհիները փրկելու համար, տեսնե՞ք թէ ձեր առաջարկը պիտի կըրնա՞յ իրագործուիլ եւ ժամանակին հասնիլ :

Սիրելի բարեկամս, մեր Ս. Առաջնորդին տալով այն ամեն յատկութիւնները, որոնցմով հայր մը ուժովցած կ'զգայ ինք զինք, կամքը սրտին ու մտքին մէջ, շարժի ու փորձէ հաւաքել խումբ մը պատուաւոր անձնաւորութիւններ, համոզէ ու յաջողի կազմել յանձնաժողով մը : այդ 50000 պարգեւաւոր տոմսերը հրապարակ հանելու համար, ըսէ՛ք կողաչեմ, զուք որ վարժ էք հաշիւներ ընելու, քանի՞ ամիս պէտք է ... եւ աւելցուցէ՛ք այս թիւերուն վրայ այն թիւերը՝ զորս գտած պիտի ըլլաք իբր նուազագոյն ժամանակաւորաց 50,000 տոմսերու սպառման ... տարի մը բուսակա՞ն է :

Մինչ անդին, որբանոցին մէջ չարացուք ախար կը շարունակէ իր աւերը գործել, բազմապատկելով զօճերուն թիւը :

Չէ՞ սիրելի՛ս, օգնութեան պէտք կայ ու անմիջապէս, եւ մերինները եթէ տեղերնուն եւրբան տարի կանցնի, եթէ սակայն այնքան բարեհաճ գտնուին որ հրերալու պէտքը տեսնեն, նորէն Պօլիսը ձգենք որ ինքը իր վէրքերը լըւայ ու մաքրէ : եւ կը հաստատմ որ որբան ալ ինկած ըլլայ ան, նիւթապէս եւ բարոյապէս :

կարող է հասնիլ հիւանդին ալ, աղքատին ալ, ու աւելի շուտ քան թէ մենք :

Ձեր առաջարկը սակայն մի այլապէս արխուր սպառուութիւն թողուց վրաս : Թէ անգամ մը նոր կեանքով զբաղելու փորձ մը ընելէ վերջ, նորէն կը դառնայինք ազգին մեծագոյն զբաղման, այսինքն գարմանել, խնամել, որբերը, աղքատները, հիւանդները ու մեռելները ... :

Ո՛հ, շուրջերնիդ նայեցէ՛ք անգամ մը, Տաճկաստանի մէջ ծայրէն միւսը, Եկեղեցի կը նորոգեն, որբեր կը պահեն, հիւանդանոցներ կը պահպանեն, ու տարին արտասահմանը, իր լայն տարածութեանը վրայ, որբանոցներու աղքատներու անհասնում ընկերութիւններ կը պահպանէ : ամենքը հին կը նորոգեն, ո՞վ պիտի շինէ նորը ... :

Անոնց անհրաժեշտութիւնը ուրանալ ոճիր մը պիտի ըլլար, սակայն երբ ուրիշ անհրաժեշտութիւններ իսպառ կը մոռցուին, մարդ վայրկեան մը կը փորձուի մոռնալ ազնաները իսկ եւ միայն ու միայն յառել իր աչքերը դէպի սպազման ... ուրիշ այնքան բան կ'պատենք եւ որ սակայն ոչ մի յոյս չը ներշնչէր :

Չ'եմ ուզեր նամակս խճողել, թուումն մասանցը ընելով այն ամեն պէտքերուն, որոնց ամբողջութիւնը ներկայ օրերու, մեր՝ արտասահմանի հայոցս զբաղմունքը պիտի կազմէր եւ որոնց վրայ անշուշտ պիտի կանգնէր, գէթ լաւագոյն սպազմալ մը :

Ձեր առաջարկը ուրեմն, փորձել կուտայ ինծի լաւատես ըլլալ առաջարկութիւններու օգտակարութեան մասին, մասնաւոր անանկ առաջարկներ, որոնք իրաջեցուցիչ չեն հայութեան մեծ մասին, եւ այս փորձառութիւնս ինծի յանդիման կուտայ ձեզ հակառակ մ'ընել, ինչպէս վերը ըսի, այլապէս կարելուր եւ սակայն մոռցուած պէտքեր մը համար, այն է՝ Արեսասանիւնի մեջ բարձրագոյն վարժարանի մը անհրաժեշտ պէտքեր :

Յայտնի է ձեզ, Տաճկահայերու ու Ռուսահայերու դպրոցական արդի վիճակը, այդ մասին երկարելը չափ ցաւառիթ է ինծի : Իսկ արտասահմանը ողորմելի նախադրութեաներէ գատ բան մը չ'ունի, նոյն իսկ շատ տեղեր ատոնք ալ չ'կան : բայց բարձրագոյն վարժարանի մը հոտը իսկ չ'կայ ուր ներկայ երիտասարդութիւնը ստանայ իրեն անհրաժեշտ հայ գարագուծը : Յաւալի չէ՞ք գտնեք այս վիճակը ... ու եթէ պահ մը մտածենք թէ, մենք 1900 ի վերջին օրերու երիտասարդներս, ինչ ջանքախուած չ'իտէլաներով 1901 ը կոխեցինք, մեզմէ վերջը եկողները ի՞նչ պիտի ըլլան : մտքով ու սրտով դատարկ, փոխանակ ակնկալուած երիտասարդութիւնը կազմելու պիտի ունենանք տարած աշխարհաքաղաքացիներ ... եւ ատոնք պիտի ըլլան մեր սպազմայ յոյսերու խարխիւներէն մին ... չէ՞ :

Արդ՝ բարեկամ, եթէ եկած է ալ ատենը որ մեր մեծերը, կրօնական թէ աշխարհական, բան մը ձեռնարկելու համար պէտք եղած կորովը ունենան եւ եթէ հաւատարմք որ եգիպտոսի մէջ կարելի է 2-3000 ոսկի հանգանակել, միթէ ամբողջ արտասահմանը մէկտեղ գտնով չ'ը կրնար կամ չ'ը պիտի կրնայ այդ գումարին հնգապատիկը ստորագրել, կանգնեցնելու համար բարձրագոյն վարժարան մը, նոյնիսկ գիւշերթիկ :

Հարկ կը տեսնէ՞ք որ հոս ծրագրեմ այս առաջարկս, բոլոր մանրամասնութեամբ, ինծի կուզայ թէ եգիպտոսի հայութեան մէջ գարագացած — պատուաւոր — հարուստ գաս մը կայ (երեք անհրաժեշտութիւններ) որ կրնայ, եթէ ուզէ, գլուխ կանգնիլ այս տեսակ ձեռնարկութեան մը, եւ եթէ փոխանակ պարգեւաւոր թղթերուն, ցրուէ զանազան կարգի տոմսեր 10-5-2-1 ոսկինոց, ոչ միայն արտասահման նոյն իսկ թուրքիա եւ մասնաւորապէս ի Կովկաս, ուր՝ ինչպէս գիտէք, մեծ շարժում մը կայ արեսասանի գործ մը կատարած չ'ը պիտի ըլլար, արգիւնքովը հիմնելով առաւուսելն 2 տարիէն, բարձրագոյն վարժարան մը յեգիպտոս :

Ծրագրի՛րը պիտի ըսէք. Կեզրոնականի ծը-

րագրով չէ՞ք բաւականանար. ( Ա. շրջան 3 տարի, Բ. շրջան 2 տարի, երկու ճիւղի բաժնուած գրական ու գիտական ) եւ եթէ այս ծրագրով գիշերթիկ ըլլայ, 20-25 ձրիավարժ ալ ունենալով, կարծեմ տարեկան 1500-2000 ոսկուայ պիտածէ մը բաւական պիտի ըլլայ Ա. շրջանին համար :

Եւ չէ՞ք կարծեք որ, անոնք որ ամեն դիւրութիւն ունին ցալու, սակայն վարժուած չեն ... կենդանի օրինակին առջեւ չ'ը պիտի մըրուին հաստատ եկամուտներ յատկացնելու անոր :

Այս ամենը կրնայ Սպանիական գղեակ ալ անուանել, բայց եթէ մի քիչ հաւատք ունինք մեր ժողովրդին կամքին վրայ, բաղձանք ու ջանք մէկտեղ բերելու է հասարակութիւնը այս նպատակին շուրջը շարժման մէջ դնելու համար՝ ըսէ՛ք, ըլլալիք աշխատութիւնը չ'ա՞րժեր :

Խորապէս կը հաւատամ թէ ամեն բարի գործ կը յաջողի մեր մէջ, եթէ անսպառ նիւթ կայ, ուժ կայ մեր երակներուն մէջ, բայց՝ ... եւ այս բայցին վրայ անգամ մ'ալ շեշտ կը դընեմ, բայց գործէն ու գործողէն կախում ունի յաջողութիւնը : անհաւատալի լաւատեսութիւն մը պիտի ըլլար իմ կողմէ, եթէ յուսայի թէ առաջարկութիւն մը լրագրութեան տալով, իսկոյն կ'իրազորուի : նոյն իսկ եթէ այդ առաջարկը ըլլայ սակից, Չակագիկէն :

Սիրելի բարեկներս  
ՅԱԿՈՒ ՓԱՓԱՉԵԱՆ

Ինչ որ ալ ըլլայ ձեր կազմելիք գաղափարը այս նամակի մասին, չեմ կարծեք որ գտնուի մէկը՝ որ չի հաւանի, չի ծափահարէ բարեկամիս առաջարկը : Կ'ըմբռնէք անշուշտ թէ՛ իրեն հրապարակային compliment մը ընելու թելադրանքէն մղուելով չէ՛ որ իր նամակին հրատարակումը յարմար գատեցի : հոն կայ գեղեցիկ գաղափար մը, բարձր նպատակ մը, որուն յաջողութիւնը իրական փառք մը պիտի ըլլար մեզի համար :

Այս առթիւ կուզէի անմիջապէս ըսելիքներու անցնիլ եթէ սակայն զիս չ'կանցնեք նամակագիր բարեկամիս այն հարցումը որով կուզէք հասկնալ, կատակածոտ չեշտով մը թէ՛ տարի մը — իբր նուազագոյն ժամանակամիջոց — բաւական պիտի ըլլա՞ր առաջարկս գլուխ հանելու համար « ինչը գեւ անգին օգնութեան պէտք կայ ու անմիջական » :

ՏԻԳՐԱՆ ՀԱՃՆԵԱՆ

(Շարունակելի)

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ի Ե Բ

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍԵՐ ՎԷՐԵՐ առողջանալու վրայ է, արդէն բորբոքումը անյայտացաւ, վէրքը կամայ կամայ կը սպիանայ : Բրօֆէսէօն Պէյկիման կը յուսայ վէրքին շըրթուեքները այնպէս միացնել որ սպին երեսը չ'աւրէ, 2-3 օրէն կայսրը բոլորովին պիտի առողջանայ :

Ննայտէմիւհէն կը գրեն թէ Վայլանտ անուներ կրող 81 տարեկան հասառու մը անձնասպան եղած է սրով՛հետեւ իր գրացիները այնպէս լուր կը տարածեն թէ կայսեր կենաց գէ՛մ դաւաճանողին մեծ հայրն է :

ՏՈՒԳԱՆՔԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԹԱԿՍԻՈՐ ՄԸ

Յունաստանի մէջ գրուած նոր օրէնքով մը, շուներու տէրերը պարտին տարեկան 12 տրախի վճարել, իւրաքանչիւր շունը համար, իսկ եթէ հարկ եղած ժամանակը չուն ունենալին չը յայտարարեն ատոր կրկինը պիտի վճարեն :


Քանի մը օր կայ Եօրկիոս թագաւորը իր պալատական սպաներէն մին կը զրկէր իր քանի շուն ունենալը յայտարարելու համար, բայց այդ յայտարարութիւնը ու-

չացած ըլլալուն, հարկահաւաքը ներուժ խնդրելով ծանայց ն. Յունական վեհապա. ութեան թէ՛ ստիպեալ էր զայն տուգան. քի դատապարտուելու, և Եօրկիոս թագա. տորը ձանդիկ ձունիկ չհանած 48 տրախմի տեղ 86 տրախմի կը վճարէ:

Dura lex, seb lex.

ՔՈՂԻՆ ՅԱԿԵՆ

ՉՕՇԱՒԱՂ ԹԱՆՁՐԱՊՈՐՏԻ ՄԸ ՆԿԱՐԱԳԻՐԸ



Մեծդի փորով, շատիս լեզուով ներկա. յանայ անբարե... Կամքն յանձնած է որովայնին, հացկատակ մ'է արգարեւ. Իբրը անկուշտ պատառաբոյծ ունի համբաւ ու հոչակ. Եւ մե՛ծ ծափեր ստէպ խըլէ զերթ բնածին խեղ. կատակ: Դէմքի կաշին է գերազանց, սյր պէս շինող խա. զախորդ Ձկալ յատիս մի հարազատ, ամենքն ալ են օտար, խորթ: Կշտապինդ իսկ թէեւ լինի, ցանկայ լընուլ իւր ամբար, Որ լայնկեկ է քան Շարային, կերք ներս սա. հին հեշտաբար: Մըտերիմդ է, երբոր ըսես, « եկ'ուր, մօտ նի'ստ, ա'րբ ու կե'ր »: Բարբանջելով կուլ տայ արագ պատառիկներ թարմ ու գեր. Մեր համադամք, ըստ իւր կարծեաց, կ'ուտ. ուին յաճախ ախորժով, Գոմքի (1) գինին, Պաղինի (2) իւղն չեն մե. բինին չափ ուժով: Իւր շողոքորթ լեզուով գանէ բարի մարդիկ, — կաթեղ կով —, Ձորս կըթելէ վերջ բամբասէ, « էշ » դաւանի ալոց քով: Տանը մէջ հացն իսկ խնայէ որդեկներուն անօ. թի, Եւ երբ օր մը դուն հոն ըլլաս, քաղցէդ՝ վա'յ քեզ, շունչդ հոտի: Իցի'ւ շառուոր չ'գտնուին այսպիսիք՝ որ լինի սով, Ձի այս տարի ամեն կողմէն երաշտութեան շըն. չէ հով. Բանի որ միշտ զբամատէրք ու պետութիւնք փառամով, Յագուրդ տալու համար իրենց անզուսպ կրից, տենչից խօլ. Կը կոզոպտեն սկարները՝ յօգուտ իրենց սեւ Ես ին. Ձոր գիմակել պիտ' չ'կրնան խնջոյք, հանդէսք մեծագին...:

ԿԵՆԳԻՄՈ

Գահիրէ 22 Մարտ 1901

(1) Խարբերդի դաշտին մէջ հայաշատ գիւղ մը, որոյ գիւղին գոյնովն ու հաւնովը կը գերազան. ցի Պորտիներ:

(2) Այս գիւղը Բարու գաւառակին իրաւա. ստրեան սակ կ'իյնայ որոյ իւրը Փոքր-Ասիոյ մէջ մեծ հոչակ հանած է:

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 24 ՄԱՐՏ 1901

7936	4050	1614	5195	269	976
1047	1575	1933	2836	3568	3939
4578	4611	5250	5317	5341	5645
6388	6621	6819	6891	7022	7243
7457	7483	7725	7733	8233	8529

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ. նէ ամենէն պէտք շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գու. մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրէ է ըն. կերութեան մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկա. յաջողցիլ է Գ. Նիբէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ. ր կէ ընկերութեան աւելի երաշխա. ւորութիւններ, ընդարձակ գործառ. նութիւններ և հրապարակի վրայ ա. ւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար, Պոլսոյ քաղաք:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԵՉ ՊԱՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂՈՐԳ ԵԿԱՒՕՑ

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Սթէյլի ճիշդ գիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԲԱՂԱՔԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցար: 17, 000, 000 ծախուած է:


400 է աւելի վկայականներով եւ մեխայններով վարձատրուած, երաշխատուող մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՇ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արձանատուագրութիւն մէջ ստացած է:

ՀԱՌԱՅՈՒՑԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԶԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւ. րաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ Ի յասկանչիւն:



Ձրի դասեր և նորոգու. թիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենա. յից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն Ինքնաքանայից Եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏՐԻԻՆ ԾՈՅԻԿ ԱՂԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Այսիւղ-Ազիլ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուհիքիւն փոխադրած է Շարա Ապարիւ Ազիլ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց, Ահմէտ պէյ Ապ. արիւ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձա. ութեամբ եւ յաջողակութեամբ արգէն ծանօթ ըլլալով գահիրէրնակ ազգայնաց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնա. րարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ճրի դարմանում:

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 24 ՄԱՐՏ 1901

2928	9950	1153	1001	897	5390
6633	4332	2605	6184	9638	2688
1174	7943	2805	5324	8382	4364
666	5010	7110	4491	7100	8849
		9592	4465	8309	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԿԱՐՇԱԼՈՅՍԻ ԶԻՄՆԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՁԸ Օսկանիյե դեղատնակին դիւրացի փողոցի մէջ:

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատ. րաստուին:

Այցեխարտեր, Շրջաքերականներ, Գիտիւ, Հրաւիրագրեր, Մահազդներ, Տեղեկագրուներ, Կանոնագրուներ, Տոսուեր և այլ և այլ տպա. րանի յերարեբեալ յանձնարարութիւններ:

Կը վաճառուին հետեւեալ գրքերն:

1. ԲՆԱՇԻԱՐՀԻԿ ԲԱՌԱՍՄԱՆ Ի Ա. և Բ. պրակներն:
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է:
3. ՀԱՒԱՔԱՏՈՑ Հայոց ժողովրդական երգերու: